Հասցեատեր՝
«Էկովիլ» ՍՊԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ vardan.hovsepyan@ecoville.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09.04.2025թ.

Նախագահ Կարեն Հովհաննիսյան

Վարույթ՝ ՖԶԲԽ Փ-Օ-004

Խախտում՝
1. «Էկովիլ ՖԶ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Հախնազարյանի (2395) կողմից խաղը սպասարկող մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություն հնչեցնելը (Հավելված 1 Լ, 18-րդ կետ)
2. «Էկովիլ ՖԶ» թիմի գլխավոր մարզիչ Արմեն Կոջամանյանի (30992) կողմից ոչ մարզական պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ի, 13-րդ կետ)

Առաջնություն՝ ՖԶԲԽ Փլեյ-Օֆֆ

Խաղ՝ «ՖԱ Սիեվն» - «Էկովիլ ֆզ», 30.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահը որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Էկովիլ ՖԶ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Հախնազարյանին (2395) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 30-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Էկովիլ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Էկովիլ ՖԶ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Հախնազարյանի (2395) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 30-ը ներառյալ:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Էկովիլ ՖԶ» թիմի գլխավոր մարզիչ Արմեն Կոջամանյանի (30992) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է

2025 թվականի մարտի 30-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ «Էկովիլ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։